ՋՐՕՐՀՆԵՔԻ ԿԱՆՈՆԻ ՏՈՆԱՅՈՒՅԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Գևորգ Ղուշչյան

Աստվածհայտնության տոնածիսական համալիրի մաս է կազմում Ջրօրհնեքը: Հոգևոր-բարեպաշտական այս արարողությունը՝ Հայտնության տոնին ջուր օրհնելը և հավատացյալներին բաժանելը, կանոնականացվել է Դվինի 719 թ. ժողովում. Կանոն ԻԶ. «Ի տօնի Յայտնութեան կատարել զջրոյն օրհնութիւն, և ի Ծաղկազարդի ոստս բառնալ»[1]:

Ջրօրհնեքի արարողությունը, որը խորհրդանշում է Քրիստոսի Մկրտությունը, անբաժան է Ս. Ծննդյան արարողությունից: Ջրօրհնեքի ծեսը, ինչպես վկայում է Մաշտոց ծիսարանի[2] «Օրհնությունաբեր ցուցակը», հեղինակել է Բարսեղ Կեսարացին, իսկ Սահակ Պարթևի հրամանով թարգմանել և Հայաստան է բերել Խոսրով թարգմանիչը[3]: Ջրօրհնեքը նախապես կատարվել է Երուսաղեմում՝ Հորդանան գետի եզերքին: Ինչպես երևում է հայոց ծիսակարգից, Հայ Եկեղեցին հավատարիմ է մնացել հինավուրց ավանդույթին: Հայ Եկեղեցու հայրերը մշտապես պայքարել են սույն ավանդույթի պահպանման համար՝ նրա մեջ տեսնելով ոչ թե սոսկ ավանդույթի շարունակման խնդիր, այլ նաև կարևորագույն այն հանգամանքը, որ Աստվածհայտնությունը սերտորեն կապված է Մկրտությանը, որով էլ հայտնվում է, թե Հիսուսն է Քրիստոսը, Աստծո Օծյալը. «Եւ իբրեւ մկրտեցաց Յիսուս, ել վաղվաղակի ի ջրոյ անտի, եւ ահա բացան մնա երկինք, եւ ետես զՀոգին Աստուծոյ զի իջանէր իբրեւ զաղաւնի եւ գայր ի վերայ նորա: Եւ ահա ձայն յերկնից որ ասէր. Դա է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ» (Մատթ. Գ, 17):

---

[1] **Ա. Մխիթարեանց**, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնագրութեամբք, Վաղարշապատ, 1874, էջ 95:

[2] Մաշտոց ծիսարանը բաժանվում է երեք մասի, Փոքր կամ առձեռն Մաշտոց՝ քահանայական խորհուրդների և արարողությունների, Մայր Մաշտոց՝ եպիսկոպոսական արարողությունների՝ Հայր Մաշտոց՝ Կաթողիկոսին վերապահված արարողությունների կատարման համար:

[3] **Ա. Արևշատյան**, Ջրօրհնեքի և Ոտնլվայի կանոնները “Մաշտոց» ծիսարանում, «Էջմիածին» ամսագիր, Ս. Էջմիածին, 1986, Ա, էջ 41:

Սուրբ Հոգին՝ աղավնակերպ, իսկ Աստված ձայնով վկայում են, որ Նա է Աստծո սիրելի Որդին: Ուրեմն՝ Նա է, ըստ մարգարեի կանխասացության, Էմմանուէլը, և դա ի հայտ է գալիս Մկրտության միջոցով: Մկրտությունն է, որ հայտնում է, թե Հիսուսն է Քրիստոսը, Աստված ծնվել և հայտնվել է մեզ՝ հանուն մեր փրկության: Ահա այս է Մկրտության (=Ջրօրհնեքի) խորհուրդը՝ միշտ անբաժան Ս. Ծննդի (=Աստվածհայտնության) խորհրդից:

Հունվարի 5-ի երեկոյան կատարվում է նախատոնակ և ճրագալույց, մատուցվում է Ս. Պատարագ: Աստվածհայտնության Ճրագալույցին երգվում են շարականներ՝ «Ուրախացիր, սրբուհի», «Զքեզ Հայր առաջ քան…», «Հրեշտակային ձայնիւն» և այլն[1]:

Հունվարի 6-ի առավոտյան մատուցվում է Ս. Պատարագ, երգվում և ընթերցվում են Փրկչի Ծննդյան հետ առնչվող սաղմոսներ, մարգարեություններ, Ավետարանական տեքստեր: Սուրբ Ծնունդը և Մկրտությունը ներբողվում են օրվան պատշաճող շարականներով, որոնք վերագրվում են Մովսես Քերթողին: Գլխավորն է “Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականը.

“Խորհուրդ մեծ եւ սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ.
Հովիւքն երգէն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի:
Ծնաւ նոր արքա ի Բեթղեհէմ քաղաքի.
Որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ:
Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս պատեցաւ.
Ոչ մեկնելով ի Հորէ ի սուրբ այրին բազմեցաւ:
Այսօր ցընծան երկինք ի վերուստ մեծապայծառ աւետեաք»[2] և այլն:

Կատարվում են նաև այլ շարականներ՝ «Այսօր բանն ի Հօրէ անմեկնելի»[3], «Որ ի Հօրէ առաքեցար»[4] և այլն, որոնք պանծացվում են Աստվածհայտնության մեծագույն խորհուրդը, փառաբանում Ս. Կույսին, որից ծնվեց Փրկիչը, փայլակնացայտ, անմատչելի կրակը օթևանեց մարդկային մարմնի մեջ (մարդացավ)՝ բոլոր արարածներին լուսավորելու համար:

Ս. Պատարագի ընթացքում հավատացյալները հաղորդվում են: Այ-

---

[1] Շարակնոց, Անթիլիաս, 1997, էջ 38:

[2] Նույն տեղում, էջ 32, 72, 68, 57, 870 և այլն:

[3] Նույն տեղում, էջ 43:

[4] Նույն տեղում, էջ 915:

նուհետև սկսվում է Ջրօրհնեքի արարողությունը՝ ի խորհուրդ և ի հիշատակ Հորդանանում Հիսուս Քրիստոսի Մկրտության (Մատթ., Գ 13-17, Մարկ., Ա 9-11, Ղուկ., Գ 21-22): Քրիստոնյաներին բաժանվում է օրհնված ջուր, որը սրվակներով նրանք տուն են տանում: Քահանան այցելում է հավատացյալների տները, կատարում տնօրհնեք: Ավանդույթը գործում է նաև այսօր:

Ջրօրհնեք անվանումը հանդիպում է Նոր Գետիկ վանքի կամ Գոշավանքի վիմական արձանագրության մեջ՝ 1301 թվագրությամբ: Վանքի միաբանները պարտավորվում են նվիրատուներից մեկի ընտանիքի անդամների հոգիների փրկության համար Պատարագ մատուցել «ԶՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ԱՒՐՆ ՋՐԱՒՐՀՆԷՔՆ»[1]:

Այստեղ տեղին է մեջբերել Հայոց Առաքելական Եկեղեցու սյուներից մեկի՝ իմաստասեր-աստվածաբան, մեկնիչ-շարականագիր Հովհաննես Երզնկացի Պլուզի (XIII դ.) խոսքերը նախ՝ Ս. Ծնունդն իբրև Աստվածհայտնություն ըմբռնելու և ապա՝ Ս. Ծնունդն ու Մկրտությունը միասնաբար տոնելու վերաբերյալ. «Ըստ բարձրաձայնության մեծին Գրիգորի Աստվածաբանի ի Ծննդեանն» ճառի՝ «Այժմ Աստուծոյ յայտնութեան տօն է, քանզի երեւեցաւ Աստուած մարդ ծննդեամբ, եւ վերագրէ զճառն ի յայտնութիւնն Քրիստոսի եւ սկսանի ի ծնունդն, թէ Քրիստոս ծնեալ լինի. եւ ի միւսում աւուրն ասէ ի Մկրտութեան ճառին, թէ մկրտութեան օրս եւ պարտ է վաստակել, եւ ոչ ասէ յայտնութեան, թէպէտ եւ է՛, զի եւ զծնունդն գիւտ է յայտնութեան: Զնոյն եւ սուրբն Բարսեղի Քրիստոսի իւրական յայտնագոյն ասէ ի կատարման ճառին, թէ անուն դիցուք տօնին Աստուածայայտնութիւն՝ տօն փրկութեան աշխարհի՝ ծննդեան մարդանալոյն Տեառն»[2]:

Մեջբերելով առաքելական, ավետարանական և հայրերի վկայու-

---

[1] **Ք. Պապիկյան**, Աստվածհայտնության կամ Մկրտության տոնը ուշ միջնադարյան աղբյուրներում, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, Երևան, 2015, էջ 334:

[2] **Յովհաննէս Երզնկացի Պլուզ**, Յաւուր Ծննդեանն եւ Մկրտութեան Քրիստոսի, **ՄՄ**, ձեռ. 2178, թերթ 92ա-104բ, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Է, խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեան, Եր., 2012, էջ 317-323, տպագրված է՝ “Գանձասար», Երևան, 1996, թիւ 6, էջ 426-53: **Ա. Երզնկացի-Սրապեան**, Հովհաննես Երզնկացի Պլուզ, Յովհաննու վարդապետի՝ Եկեղեաց գաւառի յԵզնկայ քաղաքէ՝ ասացուած յաւուր՝ Ծննդեան եւ Մկրտութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ եւ ի խորհուրդ միւորութեան տօնիցն, ի սրբոցն ժողովեալ բանից ի մի յարմարութիւն, “Գանձասար» աստուածաբանական հանդէս, թիւ 6, Երևան 1996, էջ 426-453:

թյունները՝ Հովհաննես Երզնկացի Պլուզը հակաճառում է նրանց, ովքեր բաժանում են «Ճշմարիտ եւ լուսաւոր» խորհուրդները՝ Ս. Ծնունդը և Մկրտությունը: Նա ասում է. «Իսկ Եկեղեցի հաւատացելոց ի միում աւուր տօնէն զտօն Ծննդեանն եւ զՄկրտութեանն»[1], և ավելացնում. «Զնոյն եւ Անթիպատրոս Բոստրացի ասէ, թէ յետ երեսուն ամի նոյն օր յայտնութեանն մկրտեցաւ Տէրն, զի մի էր երկոցունց խորհուրդ»[2]:

Նա համեմատության եզրեր է անցկացնում Ծննդոց գրքի առաջին օրվա՝ «Եւ ասաց Աստուած, Եղիցի լոյս. Եւ եղեւ լոյս» (Ծնն. Ա, 3) խոսքի խորհրդի և Քրիստոսի Ծննդի միջև, քանզի ի դեմս Հիսուսի՝ “Լոյս նոր ընդ Հօր ի Կուսէն ծագեցաւ, եւ Բանն մարմին եղեալ՝ յայտնեցաւ»[3]:

Անդրադառնալով Ծննդոցի նախընթաց խոսքին, թե «... Հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց» (Ծնն., Ա 2), Պլուզն այն դիտարկում է իբրև մարգարեացում ավետարանական-նորկտակարանյան իրադարձության, երբ Հորդանանում Սուրբ Հոգին աղավնակերպ իջավ Հիսուսի վրա. «Եւ անդ՝ (իմա՝ Ծննդոցում – Գ. Ղ.) Հոգի Աստուծոյ ի վերայ ջուրց, եւ աստ՝ աղավնակերպ ի վերայ Յորդանանու: Անդ՝ վասն ստեղծագործելոյ, որ ի ջուրսն, աստ՝ վասն վերաստեղծելոյ զհոգեւոր ծնունս աւազանին»[4]:

Հովհաննես Երզնկացի Պլուզի հիշյալ ճառում առկա մեկնությունները հարազատորեն ցոլացնում են Հայ Եկեղեցու մեկնակերպն ու դիրքորոշումը՝ Աստվածհայտնության տոնի նկատմամբ: Օրվա ծիսակարգի մեջ ընդգրկված արարողակարգերն (սրբալույս Մյուռոնի աղավնու՝ Սուրբ Հոգու խորհրդանշանի բերումը, «Ով զարմանալի» տաղի և «Առաքելոյ Աղաւնոյ» շարականի երգակցությամբ մյուռոնի կաթեցումը ջրի մեջ, խաչի գցումը ջրի մեջ՝ “Պահպանիչ»-ն ասելու ընթացքում և այլն) այդ մեկնակերպի արտահայտությունն են, հիշատակումը Հին և Նոր կտակարանյան խոսքերի և իրադարձությունների, որոնք ցույց են տալիս դրանց խորհրդական և իմաստային զուգահեռականությունը կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ փոխձայնակցումը առարկայական, այլաբանական (=-հոգևոր) և հայտնատեսական մակարդակներում:

Պլուզը նույն ճառում Աստվածհայտնության ութնօրյա տոնակատարությունը համեմատում է Մովսեսի հրահանգած Տաղավարահարաց տո-

---

[1] Նույն տեղում, էջ 450:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

նի հետ, որին նախորդում էին քավության հինգ օրերը. «Եւ ի տասներորդի նորին ամսոյ (Թշրինի 10 – Գ. Ղ.) կոչեղեալ սուրբ եղիցի ձեզ. եւ լլկեսջիք զանձինս ձեր...», (Թիւք, ԻԹ 7): «Եւ յաւուրն հնգետասաներորդի նորին եւթներորդի ամսոյ՝ կոչեցեալ սուրբ եղիցի ձեզ. զամենայն գործ սպասաւորութեան մի՛ գործիցէք, եւ տօնեսջիք նա տօն Տեառն զեւթն օր» (Թիւք, ԻԹ 12): «Եւ յաւուրն ութերորդի ելք լիցին ձեզ» (Թիւք, ԻԹ 35): Հիշատակում է Զաքարիա քահանայի պաշտամունքը տաճարում՝ նվիրված Քավությանը և Տաղավարահարաց տոնին, որի ժամանակ, ըստ Մովսիսական օրենքի, իսրայելացիները պետք է բնակվեին նոր տաղավարներում՝ տոնակատարման համար: Զուգահեռներ անցկացնելով Հին և Նոր կտակարանյան պատվիրանների և իրադարձությունների միջև և հետևելով Եկեղեցու հայրերի սահմանած ավանդույթին՝ նա գտնում է, որ ժամանակային առումով Փրկչի Ծնունդը և Մկրտությունը հանդիպում են նույն օրը՝ հունվարի 6-ին. «Այլ մեք զմերս հաստատեսցուք արձան ճշմարտութեան, բազմամբն վկայիցն հաստատութեամբ՝ ի միում աւուր լինել ծննդեանն եւ մկրտութեանն, որպես Հիպողիտոս եպիսկոպոս ասէ. Իննամսեայ ծնաւ Տէրն եւ երեսնամեայ մկրտեցաւ՝ ի նմին աւուր ...»[1]: Այս խորհրդածությունների և եզրահանգումների աղբյուրը Ղուկաս Ավետարանչի վկայությունն է, թե «Եւ ինքն Յիսուս էր ամաց իբրեւ երեսնից» (Ղուկ., Գ 23), երբ Հորդանանում Հովհաննես Մկրտչի ձեռքով մկրտվելուց հետո սկսեց իր գործունեությունը:

Անշուշտ, հնարավոր չէ ամբողջությամբ վերհանել Աստվածհայտնության տոնի խորհրդական ողջ հղացքը, բայց խոսքը համեմատաբար տարողունակ դարձնելու առումով արժե հիշատակել Ջրօրհնեքի հետ կապված շարականները, կցուրդները, որոնք տոնի խորհրդի ընկալման համար ունեն առանձնակի արժեք: Դրանք նաև հայ քրիստոնեական-դավանաբանական մտքի և Աստծո Խոսքի հոգևոր-այլաբանական–-խորհրդական ընկալման ցայտուն արտահայտություններ են:

Այսպես, ութնօրյակի ընթացքում, յուրաքանչյուր օրվա համար Շարակնոցը սահմանում է շարականներ, որոնք հիմնականում վերագրվում են Մովսես Քերթողին (Մովսես Խորենացուն): Առաջին օրվա համար՝ «Այսօր Բանն ի Հօրէ անմեկնելի...», «Քրիստոս ծնեալ այսօր...» և այլն, երրորդ օրվա համար՝ «Էակից Հօր և Հոգւոյն անսկիզբն...», «Հրաշափառ ծնունդ քո...», չորրորդ օրվա համար՝ «Այսօր Գաբրիէլ ցնծութեամբ...»,

[1] Նույն տեղում, էջ 449:

հինգերորդ օրվա համար՝ «Այսօր որ յաթոռ փառաց…», վեցերորդ օրվա համար՝ “Լոյս լուսոյ մայր եւ կենարար…», յորթերորդ օրվա՝ «Անեղանելի բնութիւն…», “Սուրբ եւ Աստուածածին Մարիամ…», «Որ զիուրն Աստուած յորովայնի…», «Ի ձայն փողոյ գալստեան…»: Ութերորդ օրը (ավարտին)՝ “Լոյս ի լուսոյ ի Հօրէ առաքեցար…», “Ծագումն հրաշալի…», «Ուրախ լեր, Մարիամ սուրբ…», «Առաքելոյ աղաւնոյ իջանելով…»:

Սուրբ հայրերի կցուրդներն ու շարականները, նվիրված Աստվածհայտնության տոնին, մտցվել են տվյալ օրվա կանոնի մեջ (կանոնականացվել են), հարստացրել Հայ Եկեղեցու ծիսակարգը՝ բազմակողմանիորեն անդրադառնալով աստվածային Բանի խորհուրդներին, ցույց տալով, որ քրիստոնեությունը ոչ թե սոսկ վարդապետություն է, այլ իր նախնական և ստույգ իմաստով՝ օծյալություն, օծյալ հոգեվիճակ (քրիստոնյա բառը, ըստ էության, նշանակում է Քրիստոսով՝ Օծյալով օծված մարդ):

Ահա այսպիսի օծյալ հոգեվիճակի, Սուրբ Հոգու ներգործումի արդյունք են հայ շարականագիրների ստեղծագործությունները, որոնք աստվածաշնչային օրհներգությունների, ողջույնների, Հին և Նոր կտակարանային տեքստերի ձայնակցումներն են, բազմապաճույճ և գեղեցիկ հորինվածքներ՝ “թացեալ եւ ներկեալ շնորհօք Հոգւոյն Սրբոյ» (Ս. Եպիփան Կիպրացու ասույթը, որը վերաբերում է Դավիթ սաղմոսողին): Դրանք կոչված են կարծես այո և ամեն ասելու Աստծո Խոսքին, որ է Քրիստոսը: Դրանք նաև Աստծո Հոգուց՝ Սուրբ Հոգուց տրված լինելով, ցույց են տալիս Աստծո շնորհների շարունակականությունը և հարատևությունը, այն, որ «Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր, նոյն եւ յաւիտեանս» (Եբր., ԺԳ 8), նաև այն, որ «Եւ բան Տեառն մնայ յաւիտեան» (Ա Պետրոս, Ա 25):

Աստվածհայտնության ութնօրյակի յուրաքանչյուր օրվա համար սահմանված շարականները, որպես “բանական զոհաբերություն» (Մատեան ողբերգութեան), ըստ էության, արձագանքում են Ղևտական գրքի պատվիրաններին՝ «… առ ի մատուցանելոյ ընծայ Տեառն, զողջակէզս եւ զզոհս իւրեանց» (Ղևտ., ԻԳ 37), «Եւ առնուցուք ձեզ յաւուրս առաջնում պտուղս զգեղեցիկ ծառոց, կողերս յարմաւենեաց, եւ ոստս ի տերեւախիտ ծառոցեւ յուռեաց եւ ոստս հագնեաց ի ձորոցուրախ լինել առաջին Տեառն, զեւթն օր» (Ղևտ., ԻԳ 40):

Այսպիսով, Քրիստոսի Ծնունդը ոչ միայն բարոյական նոր արժեհամակարգով հեղափոխեց աշխարհը, այլև կրոնաքաղաքական հեղաշրջում մտցրեց, ինչն արտահայտվեց տոմարագիտական, մշակութային, ծիսական ու դավանաբանական հարթություններում:

Բանալի բառեր *- Տոն, Հայ Առաքելական Եկեղեցի, Աստվածահայտնություն, Սուրբ Ծնունդ, Մկրտություն:*

КАЛЕНДАРНЫЕ РАЗВИТИЯ КАНОНА ПРАЗДНИКА ВОДООСВЯЩЕНИЯ

Геворг Гущян

Ключевые слова*: Праздник, Армянская Апостольская Церковь, Богоявление, Рождество Христово, Крещение.*

В статье рассматриваются характерные черты становления, развития праздника Богоявления (Крещения Господня). Раскрываются также различные подходы как Армянской Апостольской Церкви, так и других Церквей к вопросу о Святом Рождестве и Богоявлении Иисуса Христа. Выдвинуты проблемы, связанные с праздником Богоявления и, что более важно, календарной основой ее развития.

THE DEVELOPMENTS OF THE FETE OF THE EPIPHANY CANON

Gevorg Ghushchyan

Key words*: Fete, Armenian Apostolic Church, Epiphany, Holy Nativity, Baptism.*

The article considers the characteristic features of the formation, development of the festival of Epiphany. It also considers and gives clarifications of various approaches by both the Armenian Apostolic Church and other Churches concerning the question on the Holy Nativity, Theophany and the Baptism of Jesus Christ. The problems concerning the Holy Baptism and what is of more importance the calendar foundation and its development considerations are put forward.

Գևորգ Ղուշչյան *– պատմ. գիտ. թեկն., ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Աստվածաբանության ամբիոնի դոցենտ*

Геворг Гущян *– Кандидат исторических наук, ассистент кафедры Богословия ЕГУ Факультета Богословия*

Gevorg Ghushchyan *- PhD in History, proffesor of chair of Theology at the YSU Faculty of Theology*